

ԿԱՐԳ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում գրավոր քննությունների և ստուգումների անցկացման և արդյունքների ամփոփման

I. Ընդհանուր դրույթներ

- I.1. Սույն կանոնակարգով սահմանվում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսումնառության կուրսերում ընթացիկ գրավոր քննությունների և ստուգումների անցկացման կարգը:
- I.2. Սույն կանոնակարգի նպատակներն են՝ պետական կրթական չափորոշիչներով նախատեսված կրթական ելքերն առավելապես ապահովելը, գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացներում առավել օբյեկտիվություն և անկողմնակալություն երաշխավորելը, ուսանողների մոտ իրավական մտածողության, վերլուծական և տրամաբանական կարողությունները զարգացնելը:

II. Գրավոր քննությունների և ստուգումների անցկացման ձևը.

2.1. Գրավոր քննությունները և ստուգումներն անց են կացվում՝

ա. խնդիրներով,

բ. թեստերով,

գ. առաջադրանքներով,

դ. «ա-գ» կետերում նշված ցանկացած կոմբինացիոն տարբերակով:

2.2. Գրավոր քննությունների և ստուգումների անցկացման նախընտրելի ձևը համարվում է խնդիրներով անցկացնելը: Քննությունների և ստուգումների անցկացման «2.1.» կետում նշված այլ տարբերակները կիրառելի են միայն այն դեպքում, եթե առկա է համապատասխան ամբիոնի հիմնավորումը՝ քննությունները (ստուգումները) խնդիրներով անցկացնելու անհնարինության մասին՝ հաշվի առնելով համապատասխան առարկայի առանձնահատկությունները:

2.3. «2.1.» կետի «ա» ենթակետի տակ հասկացվում է տվյալ դասընթացի ծրագրով նախատեսված թեմաների շրջանակներում տեսական նյութի պրակտիկ կիրառելիությունն ապահովող խնդիրների նախատեսում (այդ թվում՝ դատական, քննչական, նոտարական կամ նման այլ գործերից վերցված օրինակների հիման վրա), որոնք ուսանողի մոտ զարգացնում են իրավական մտածողության, վերլուծության և տեսական նյութի պրակտիկ կիրառելիության կարողությունները:

Եթե գրավոր քննության առավելագույն միավորը 4 է, ապա առաջադրվում է երկու խնդիր՝ յուրաքանչյուրը 2-ական միավոր արժեքով: Եթե գրավոր քննության

առավելագույն միավորը 9 է, ապա առաջադրվում է 3 խնդիր՝ յուրաքանչյուրը 3-ական միավոր արժեքով: Եթե գրավոր քննության առավելագույն միավորը 10 է, առաջադրվում է 4 խնդիր, յուրաքանչյուրը 2.5-ական միավոր արժեքով: Միավորների քայլը 0.5:

3. «2.1.» կետի «բ» ենթակետի տակ հասկացվում է տվյալ դասընթացի ծրագրով նախատեսված թեմաների շրջանակներում տեսական նյութի ընդհանրացում (հնարավոր է նաև պրակտիկ իրավիճակների վերլուծություն և այլն), որն արտահայտվում է առաջադրված հարցերին տրված պատասխաններից որևէ մեկը ուսանողի կողմից ընտրելու միջոցով նրանց գիտելիքների իմացության ստուգմամբ:

3.1. Թեսթային հարցերը բովանդակում են 4 պատասխաններ, որոնցից մեկը պետք է լինի ակնհայտ սխալ, մյուսը՝ ճիշտ պատասխանին մոտ, մյուս երկուսը՝ միմյանց շատ նման: Ճիշտ պատասխանը պետք է լինի հստակ և անվիճելի: Թեստերի ընտրությունը պետք է լինի հեշտ, միջին և դժվար, ըստ համամասնության – 20%, 50%, 30%:

3.2. Թեսթային այլ կոմբինացիաներ (օրինակ, նախատեսել ուսանողի կողմից հարցի պատասխանը շարունակելը՝ նվազագույնը 3 տող, առավելագույնը կես էջ և այլն), որպես բացառություն, համապատասխան հիմնավորման դեպքում կարող են թույլատրվել մեթոդիտրիքի երաշխավորությամբ, համապատասխան գնահատման չափանիշներով:

Թեսթային առաջադրանքները չպետք է բովանդակեն զուտ տեսական հարցերի շարադրանք պարունակող հարցեր

Եթե գրավոր քննության առավելագույն միավորը 4 է, ապա առաջադրվում է 60 թեսթային հարց: Մինչև 30 ճիշտ պատասխան՝ 0 միավոր, 31-39 ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, 40-47՝ 2 միավոր, 48-55՝ 3 միավոր, 56-60՝ 4 միավոր:

Եթե գրավոր քննության առավելագույն միավորը 9 է, ապա առաջադրվում է 80 թեսթային հարց՝ Մինչև 25 ճիշտ պատասխան՝ 0 միավոր, 26-32 ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, 33-38՝ 2 միավոր, 39-44՝ 3 միավոր, 45-50՝ 4 միավոր, 51-56՝ 5 միավոր, 57-62՝ 6 միավոր, 63-68՝ 7 միավոր, 69-74՝ 8 միավոր, 75-80՝ 9 միավոր:

Եթե գրավոր քննության առավելագույն միավորը 10 է, առաջադրվում է 100 թեսթային հարց՝ Մինչև 33 ճիշտ պատասխան՝ 0 միավոր, 34-41 ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, 42-48՝ 2 միավոր, 49-55՝ 3 միավոր, 56-62՝ 4 միավոր, 63-69՝ 5 միավոր, 70-76՝ 6 միավոր, 77-83՝ 7 միավոր, 84-89՝ 8 միավոր, 90-95՝ 9 միավոր, 96-100՝ 10 միավոր:

4. «2.1.» կետի «գ» ենթակետը կարող է արտահայտվել՝

4.1. Բակալավրիատում՝ տվյալ դասընթացի ծրագրով նախատեսված թեմաների շրջանակներում նյութա-իրավական, դատավարական փաստաթղթերի, իրավական ակտերի նախագծերի կազմում, դատական նախադեպերի ուսումնասիրություն, դատական պրակտիկայի, վիճակագրության վերլուծություն հանձնարարելով, թիմային աշխատանք, պրեզենտացիաների ներկայացում հանձնարարելով և այլն: Սա կարող է դրսևորվել նաև դատավարական գործողությունների, կրիմինալիստիկական հետազոտությունների պրակտիկ կատարմամբ, ցուցադրմամբ, քննչական գործողությունների պլան կազմելով և ուսանողների տրամաբանական-վերլուծական կարողությունները զարգացնող ու տեսական նյութի պրակտիկ կիրառելիությունն

ապահովող այլ առաջադրանքների նախատեսմամբ: Գնահատումն իրականացվում է դասախոսի կողմից հիմնավորված և մեթոդիտրիքի կողմից հստատված գնահատման տարբերակով:

4.2. Մագիստրատուրայում`

ա) գիտահետազոտական աշխատանք (ռեֆերատ, անհատական աշխատանք կամ այլ աշխատանք 15-20 էջերի սահմաններում) հանձնարարելով, որը կարող է ամփոփվել աշխատանքի հրապարակային պաշտպանությամբ (աշխատանքի պրեզենտացիա, քննարկում, բանավեճ, դատախաղ և այլն) կամ առանց դրա` աշխատանքը դասախոսին հանձնելով` էլեկտրոնային կամ թղթային տարբերակով,

բ) դատական նախադեպերի (ինչպես ՀՀ, այնպես էլ արտասահմանյան երկրների) ուսումնասիրություն, մշակում և վերլուծություն կատարելու աշխատանք հանձնարարելով: Արդյունքները կարող են ամփոփվել աշխատանքը հրապարակային ներկայացնելով (քննարկում կազմակերպելու, բանավեճ, դատախաղ և այլ ձևեր) կամ առանց դրա` աշխատանքը դասախոսին հանձնելով` էլեկտրոնային կամ թղթային տարբերակով,

գ) էլեկտրոնային կամ թղթային տարբերակով խնդիրներ և այլ առաջադրանքներ (այդ թվում` պայմանագրերի, տարբեր դատավարական փաստաթղթերի կազմում, դատական որոշումների վերլուծություն, գնահատում և այլն) հանձնարարելով: Արդյունքները կարող են ամփոփվել աշխատանքը հրապարակային ներկայացնելով (քննարկում կազմակերպելու, բանավեճ, դատախաղ և այլ ձևեր) կամ առանց դրա` աշխատանքը դասախոսին հանձնելով` էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

5. 2.1. կետի «գ» ենթակետի տակ հասկացվում է նույն կետի «ա-գ» ենթակետերում նշված ցանկացած կոմբինացիոն տարբերակը:

6. Գրավոր քննությունները կարող են անցկացվել նյութական աղբյուրներից (դասագիրք, օրենսգիրք և այլն) օգտվելու հնարավորության ընձեռմամբ կամ առանց դրա` ամբիոնի համապատասխան հիմնավորմամբ: Գրավոր քննությունները կարող են անցկացվել նաև տանը նախապատրաստվող քննությունների ձևով:

III. Գրավոր քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփման կարգը.

7.1. Գրավոր քննությունները և ստուգումները, դրանց անցկացման ձևից ելնելով` ամփոփվում են նույն պահին կամ դրանց անցկացման օրվանից 3 աշխատանքային օր հետո:

7.2. Գրավոր քննությունների և ստուգումների արդյունքները քննության անցկացման օրվանից հետո 4-րդ օրը փակցվում են ուսանողների համար տեսանելի վայրում, միաժամանակ տարածվում են էլ. վեբ կայքի միջոցով:

7.3. Գրավոր քննությունների և ստուգումների արդյունքները կարող են բողոքարկվել նույն պահին կամ դրանց հրապարակման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում` դասավանդող դասախոսին: Ընդհանուր համաձայնության չգալու դեպքում նույն օրը կարող է գրավոր դիմում ներկայացվել համապատասխան ամբիոն, որից հետո

դիմումը հանձնաժողովային կարգով քննարկվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում ուսանողին կարող է տրամադրվել գրավոր աշխատանքի պատճենը:

7.4. Քննությունների արդյունքներն արտացոլվում են ուսումնական տեղեկագրերում:

Հավելված N 2

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2012 թվականի սեպտեմբերի 28-ի N 1 որոշման

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում բանավոր քննությունների և ստուգումների անցկացման կանոնակարգ

IV. Ընդհանուր դրույթներ

IV.1. Սույն կանոնակարգով սահմանվում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսումնառության կուրսերում բանավոր քննությունների և ստուգումների անցկացման կարգը:

IV.2. Սույն կանոնակարգի նպատակներն են կրթական և ուսումնական գործընթացների թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելը, գիտելիքների ստուգման և գնահատման գործում առավել օբյեկտիվություն և անկողմնակալություն երաշխավորելը, կրթական և ուսումնական գործընթացների արդյունավետությունն ու առաջընթացն ապահովելը:

V. Բանավոր քննությունների և ստուգումների անցկացման ձևը.

2.1. Բանավոր քննությունը և ստուգումն անցկացվում են ուսանողներին նախապես (քննությունից և ստուգումից առնվազն 15 օր առաջ) տրամադրված հարցաշարերի հիման վրա կազմված քննական տոմսերով:

2.2. Քննական տոմսերը պետք է կնքված լինեն դեկանատի և ստորագրված համապատասխան ամբիոնի վարիչի կողմից:

2.3. Քննական տոմսերում նշվում է յուրաքանչյուր հարցի առավելագույն միավորը և միավորների քայլը:

2.4. Բանավոր ստուգումների ժամանակ քննական տոմսի հարցերին պատրաստվելու համար ուսանողին ժամանակ չի տրամադրվում: Բանավոր քննությունների ժամանակ քննական տոմսի հարցերին պատրաստվելու համար ուսանողն ունի նվազագույնը 10 րոպե պատրաստվելու ժամանակ:

2.5. Բանավոր քննության և ստուգման ժամանակ վերցրած քննական տոմսը փոխել չի թույլատրվում:

2.6. Առաջադրված հարցերին ուսանողի լիարժեք պատասխանը ենթադրում է տեսական և/կամ պրակտիկ նյութի վերարտադրում, ինքնուրույն վերլուծություն, ինքնուրույն տեսակետների արտահայտում:

2.7. Ստուգման (քննական) գործընթացը բաց է. դրան կարող են ներկա գտնվել տվյալ խմբի բոլոր ուսանողները:

2.8. Քննվող ուսանողը պատասխանում է ամբիոնից:

2.9. Քննող դասախոսից բացի, քննության ողջ ընթացքին, որպես կանոն, մասնակցում է տվյալ դասընթացի սեմինար (կամ գործնական) պարապմունքներ անցկացնող դասախոսը (դասախոսները), իսկ դրա անհնարինության դեպքում՝ տվյալ ամբիոնի այլ անդամ (անդամներ) կամ ամբիոնի վարիչը: